ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ.

Ի լրումն ՀՀ Արմավիրի մարզի «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ և «Բերքաշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ միացյալ կառավարման խորհրդի նախագահի 26. 10. 2022 թվականի գրության տեղեկացնում եմ Ձեզ, որ Արմավիրի մարզի «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ տնօրենի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթը հետաձգվել է մասնակցության հայտերի բացակայության պատճառով, նույն կարգի 6-րդ կետով փաստաթղթերի ժամկետը երկարացվել է մեկ անգամ՝ 15 օրով:

Մրցույթը կկայանա 2022 թվականի դեկտեմբերի 22-ին ՝ ժամը 15:00-ին:

Կից ներկայացվում են՝ քաղվածք կառավարման խորհրդի համապատասխան նիստի №04 արձանագրությունից և հայտարարության տեքստը:

Առդիր՝ 2 թերթ:

«Բերքաշատի միջնակարգ դպրոց»
և «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց»
ՊՈԱԿ-ների միացյալ խորհրդի նախագահ՝ Ա. Առաքելյան

17.11.2022թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 4-1885-2022
17 11 2022 թ.

ՔԱՂՎԱԾՔ

«Բերքաշատի միջնակարգ դպրոց» և «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների կոլեգիալ կառավարման մարմնի՝ միացյալ խորհրդի 2022 թվականի նոյեմբերի 17-ի նիստի № 04 արձանագրությունից

Նիստը գումարվել է 2022 թվականի նոյեմբերի 17-ին:
Նիստին մասնակցում են խորհրդի 9 /ինը/ անդամներից 9-ը /ինը/ անդամ:

ՕՐԱԿԱՐԳ

1. Արմավիրի մարզի «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթի հետաձգման մասին /զեկուցող, խորհրդի նախագահ՝ Ա.Առաքելյան/:

ԼՍԵՑԻՆ՝

Ա.Առաքելյանը ներկայացրեց, հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման 6-րդ կետի պահանջներին համապատասխան, մասնակցության հայտերի բացակայության դեպքում փաստաթղթերի ժամկետը երկարացվում է մեկ անգամ՝ 15 աշխատանքային օրով, որի վերաբերյալ մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրվում է հայտարարություն համաձայն նույն կարգի 4-րդ կետի պահանջներին:

Հիմք ընդունելով վերոնշյալը.

ՈՐՈՇԵՑԻՆ

Արմավիրի մարզի «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի համար անցկացնել մրցույթ:
Փաստաթղթերի ընդունման ժամկետը սահմանել 2022թ.-ի նոյեմբերի 18-ից մինչև դեկտեմբերի 8-ը ներառյալ՝ մինչև ժամը 15:00-ն:
Մրցույթը նշանակել 2022թ.-ի դեկտեմբերի 22-ին՝ ժամը 15:00-ին:
Խորհրդի որոշումը ներկայացնել ՀՀ ԿԳՄՍ նախարարին և ՀՀ Արմավիրի մարզպետին:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀՀ Արմավիրի մարզի «Բերքաշատի միջնակարգ դպրոց» և «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների միացյալ խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնի համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝
1. ՀՀ քաղաքացիությունը,
2. <<Հանրակրթության մասին>> օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝
1. Դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
2. ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը (բնօրինակի հետ),
3. հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը (բնօրինակի հետ),
4. տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (որը հավակնորդը կարող է ներկայացնել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը, այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով), որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում, ինչպես նաև տրամադրում է խորհրդի մյուս անդամներին,
5.ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են 2022 թվականի նոյեմբերի 18-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 8-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից, «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի դեկտեմբերի 22-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի <<Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում, հասցեն՝ գյուղ Նոր Կեսարիա, 14 փողոց, շենք 20:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 094780003, 093517023, 093233108, էլեկտրոնային հասցե՝ norkesaria@schools.am: